

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 25/12

Քաղ. Երևան

27 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. նոյեմբերի 27-ի նիստում (արձանագրություն N 8.6) քննարկեց «Օրինո Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Դավթյանի կողմից 2012թ. նոյեմբերի 1-ին ներկայացված «Տուփ փաթեթավորման համար» (20120011) արդյունաբերական նմուշի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական Նմուշների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 41-րդ գլխի 1-ին կետի «բ» ենթակետը, համաձայն որոնց արդյունաբերական նմուշը ենթակա չի գրանցման, քանի որ այն չի համապատասխանում արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմանին՝ ինքնատիպությանը: Արդյունաբերական նմուշը ինքնատիպ է, եթե ընդհանուր տպավորությունը, որը թողնում է տեղեկացված սպառողի վրա տարբերվում է ցանկացած այլ արդյունաբերական նմուշի թողած ընդհանուր տպավորությունից, որը հանրամատչելի է դարձել մինչև հայտի ներկայացման թվականը, կամ եթե խնդրարկվում է առաջնություն, ապա՝ մինչև առաջնության թվականը: Տվյալ դեպքում ներկայացված «Տուփ փաթեթավորման համար» նմուշը ինքնատիպ չէ, քանի որ ընդհանուր տպավորությունը, որը թողնում է տեղեկացված սպառողի վրա, չի տարբերվում այլ փաթեթավորումներից, մասնավորապես ընկերության անունով գրանցված արդյունաբերական նմուշից (N 76603): Գրանցված և բողոքարկված արդյունաբերական նմուշները ունեն նույն դիզայնը:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և գտնում է, որ բողոքարկված արդյունաբերական նմուշը (20120011) համաձայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կարող է իրավական պահպանություն ստանալ:

Նշված է, որ գրանցված (հակադրված N76603 (RU)) և հայտարկված արդյունաբերական նմուշներում դրված են բոլորովին տարբեր մտահղացումներ և գաղափարներ՝ բոլորովին տարբեր գեղարվեստահորինվածքային լուծումներով, որոնք այդ նմուշներին օժտում են ինքնատիպությամբ և տարբերակիչ հատկությամբ, ինչը սպառողին օգնում է անսխալ զանազանել այդ փաթեթավորումները:

Բողոքարկողը գտնում է, որ գրանցված փաթեթավորման վրա պատկերված է ստորջրյա աշխարհը, որի կենտրոնական մասում որպես գերիշխող տարր ոճավորված ալիքի ֆոնի վրա պատկերված են ժպտացող կետի ոճավորված ֆիգուրը, շրջապատված զանազան ոճավորված ծովային էակներով, իսկ վերևում՝ կաթացող ջրային կաթիլներով ամպը: Այսինքն, այս նմուշի մտահղացումն է սպառողին մատուցել ստորջրյա կենդանական աշխարհը՝ իրականացված մոլտիպլիկացիայի հնարքով: Եվ, իհարկե, հիմնական գերիշխող, տարբերակիչ և հիշվող տարրն է հանդիսանում կետի ոճավորված ֆիգուրը:

Բողոքում նշված է, որ բոլորովին այլ մտահղացում և գաղափար է դրված բողոքարկված արդյունաբերական նմուշի հայտում, ինչը կանխորոշել է բոլորովին այլ գեղարվեստահորինվածքային լուծում, քան հայտնի նմուշում է: Այս նմուշում առջևի կողմում պատկերված է ոճավորված ծովահենային նավ՝ կապտամանուշակագույն առագաստով, որի վրա ծովահեններ են՝ ոճավորված երևակայական էակներ-մարդուկների տեսքով, որոնք զվարճանում և ուրախանում են ուռկանով ծովի հատակից դուրս բերված որսով: Եվ, իհարկե, կենտրոնական ֆիգուրն է ծովահենների պարագլուխը՝ գլխին ծովահենային եռանկյունաձև գլխարկով: Երկրորդ գերակշռող և տարբերակիչ տարր է հանդիսանում պատկերի ձախակենտրոնական վերին մասում առկա մեծ դաշտը: Տվյալ դեպքում այս արտահայտությունը կարելի է հասկանալ որպես "ծովային գայլ": Տուփի վերևի աջ կողմում պատկերված է սկահակ՝ լի տարբեր ծովային ուտեստներով և բանջարեղենով: Փաթեթավորման հետևի կողմում պատկերված է "ծովահենային քարտեզ" խաչաձևված սրերով գանգով ծովահենային խորհրդանշանով, կոկորդիլոսով և կզղու անվանումով՝ "Потейто Айленд", որտեղ պահվում են թաքցրած գանձերը: Քարտեզի վրա խաչաձև գծերով և թվանշանային շրջանակներով և կապույտ սլաքներով պատկերված է այն մարշրուտը, որն անցնելով կարելի է գտնել գանձը (համանման ֆիշկաններով մանկական խաղին): Ձախ նեղ շերտի վրա պատկերված է երևակայական էակի տեսքով հավաքովի տարր: Փաթեթավորման տուփի աջ և ստորին կողմերի վրա նույնպես կան «Marine Boy» գրառմամբ դաշտ և ծովահենների պարագլխի ֆիգուրը:

Եվ այսպիսով, բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության այն կարծիքի հետ, որ գրանցված և ներկայացված արդյունաբերական նմուշները նման են, քանի որ, ինչպես վերը նշվեց,

երկու փաթեթավորումներն ունեն բացառապես տարբեր թե՛ պատկերային, թե՛ իմաստային դիզայն, ինչը չէր կարող խոչընդոտել հեղինակի ստեղծագործական ազատության աստիճանին:

Հաշվի առնելով բողոքում նշված պարզաբանումերը՝ բողոքարկողը խնդրում է վերանայել փորձաքննության մերժման մասին որոշումը:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. նոյեմբերի 1-ին «Օրին Բորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել է «Տուփ փաթեթավորման» (հայտի համարը N 20120011) արդյունաբերական նմուշի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց արդյունաբերական նմուշի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը:

Նշվեց նաև, որ գրանցված և բողոքարկված արդյունաբերական նմուշները նախատեսված են տարբեր ապրանքատեսակների փաթեթավորման համար և սպառողը չի շփոթի դրանք միմյանց հետ:

Կոլեգիան առաջարկեց բողոքը բավարարել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, արդյունաբերական նմուշի մերժման մասին Գործակալության 03.09.2012թ. որոշումը չեղյալ ճանաչել և գրանցել «Օրին Բորփորեյշն» ՍՊԸ-ի «Տուփ փաթեթավորման համար» (20120011) արդյունաբերական նմուշը:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան